Ձ՝գիտեմ, իրաւացի՞ է արդեօք զծանր սխտիւք վարակելովք զանց արարեալ՝ ըստ թեթեւ հիւանդաց միայն հոգալ. գործ է զյամառեալս՝ ի թերահաւատութեան ոչ միայն ամենապարտ կացուցանել, այլ և ջանալ կակղել զյամառութիւն խորհրդոց նոցա՝ Աստուածային զրոց վարդապետութեամբ. ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. որչափ զօրաւոր լցեն սխտոք, զօրաւորաց և կարօտին դեղոց. ‘‘ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս,,։ Սամարացին չարար անտես զկիսամահ վերաւորեցելոն, այլ զամենայն հնարս փրկութեան նորա ընձեռեաց. և եթէ Հայրապետն եկեղեցւոյ չկամի ոչ միայն հոգալ զուղղութենէ յամառելոց, այլ և ամենապարտ զնոսա կացուցանել անգամ չառնու յանձն, չգիտեմ՝ ո՞ այլ խնամ տանելոց է նոցա. վանդի գովութեան արժանաւոր այն բժիշկ է, որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել (Մարգիս շնորհալի երես 287). և ըստ այսոցիկ պատճառանաց, զայս հատուած բանի պարտ է յայլ իմն եղանակ ածել։

Ի վախճան համառօտ տեսութեանս յաղագս տետրակին՝ ի վերայ հրաշագործ մասանց սրբոց՝ յաւելում և զայս, թէ՝ այս տետրակ վասն Հայոց Ուսումնարանի ոչ միայն աւելորդ է, այլ և վտանգաւոր. առ մեզ չեմք երբէք խնդիր վասն այդր առարկայի. մեք ընդունիմք զհրաշագործութիւնս եղեալս միջնորդութեամբ մասանց սրբոց. ժողովուրդք մեր յանչափս ջերմեռանդ են՝ ի յարգութիւն սրբազան նշխարաց, ապա ուրեմն տարածանել ուրեք ընդդեղ ապաքինիչ անգոյ ախտի, է յարուցանել զհետաքրքրութիւն վնասակար։

Իսկ եթէ կարևոր համարիք զայն վասն Հայոց Օսմանեան տէրութեան, որոց վիճակ քաջայայտ է Ձեզ, զայն դուք դիտէք։

Աղաչեմ՝ ընկալարուք զբանս իմ իբրև զծնունդ որդիական սիրոյ և մի՛ յանդուգն հոգւոյ պտուղ։

Որով եմ և մնամ մեծի Քահանայապետիդ միշտ պատրաստական և մաներմանդոյն ծառայ

Յակոբ Կարնեցի

Ի 26-ն Սեպտ. 1859 թ.։
Ի ՏՓԽԻՍ։

Խմբագրութեան պատասխան Աշխարհապայ

Անցեալ 1869 թուի Աբրիլ ամսագրոյդ սեպտեմբեր ամսոյ տետրակի մէջ՝ մեր ստորագրութեամբ հրատարակուած է մի յօդուած, որ հաղորդում էր ընթերցասէր Ազգայնոց մի քանի տեղեկութիւնք քաղաքիս Ազգային—Հոգևոր ուսումնարանի՝ Հայկական Ընթերցարանի՝ Որբախնամ Ընկերութեան, և այլ երկու ընկերութեանց վերաբերութեամբ. այժմ զանց առնելով վերջին ընկերութեանց մասին խօսել, որովհետև գրեթէ միևնոյն դրութեան մէջ կան, կամենում եմ յիշեալ ուսումնարանի՝ Ընթերցարանի և Որբախնամ ընկերութեան սոյն այս տարւոյ մէջ կրած կիրպարանափոխութեանց՝ և ցոյց տուած արդիւնաւորութեանց նկատմամբ հետևեալ տեղեկութիւններն հասուցանել՝ ի լուր սիրելի ազգայնոցս միջոցաւ՝ Աբրիլ պատուական ամսագրոյդ, մեծայոյս լինելով՝ թէ որպէս ազգային կարևոր տեղեկութիւնք անշուշտ պէտք է ընդունելութիւն գտնեն դորա մէջ։

Նախ սկսենք ուսումնարանից. որոյ անցեալ կեանքին տեղեկանալու ցանկացողը կարող է քաղել վերոյիշեալ յօդուածից. իսկ ներկայի մասին կարելի է ասել, որ այս տարի այժմեան Հոգաբարձութեան շնորհիւ՝ ուսումնարանը մի քանի

քաղ յառաջ գնացած է թէ նիւթական և թէ ուսումնական մասերի վերաբերութեամբ. վասն զի Պատուելի Հոգաբարձութիւնը անցեալ 1869 ամի սեպտեմբեր ամսոյ սկզբին՝ ուսումնարանի ամենակարևոր շինութիւններն և կարկատաններն աւարտելուց յետոյ՝ ուշադրութիւն դարձոյց ուսումնական մասի վերայ, կարգեց տեսուչ տեղւոյս արքունի գաւառական ուսումնարանի առաջնակարգ ուսուցչաց մինն Հայազգի Պարոն Միքայէլ Միքայէլեանցն, որ իւր ազատ ժամերն գայ Աղգային Հոգևոր ուսումնարանը, և պարապի տեսչական հոգացողութեամբ, և երրորդ դասատան մէջ Ռուսաց լեզուի և աշխարհագրութեան դասատուութեամբ. որովհետև ուսումնարանի նիւթական միջոցը չի ներեր, որ առանձին տեսուչ պահէ արժանաւոր ռոճկով, մանաւանդ որ հին հաշիւների մի մասը առանձին իմն խոշընդոտների պատճառաւ գեռ ևս չէր պարզուած, որպէս և այժմ էլ նոյն գրութեան մէջ կայ. սոյնպէս նշանակեց և մի այլ ուսուցիչ Ռուսաց լեզուի, որով և այդ լեզուն այս տարի սկսաւ փոքր 'ի շատէ արդիւնաւորութիւն ցոյց տալ. և որովհետև սոյն այս պատճառաւ ուսումնարանի ծախուց քանակութիւնն բաւական ստուարացաւ, և ինչպէս ասացինք, նորա նիւթական կարողութիւնը այնքան զօրեղ չէր, ուստի բարեջան Հոգաբարձութիւնն հարկադրեցաւ ուսումնարանի աշակերտներն (որ առհասարակ հարիւր յիսուն կ'լինին, որից և ըստ տեղական վնասակար սովորութեան՝ երբեմն բաւական աւելանում են, և երբեմն նուազում,) բաժանել չորս կարգ. և որոշեց նոցանից թոշակ առնել ըստ արժանաւորութեան. առաջին կարգի աշակերտք, որոնց ծնողքը մեր քաղաքի գրութեան նայելով՝ բաւական կարողութեան տէր կը համարուին, պէտք է տան ուսումնարանին ամսական թոշակ վեցսունական կոպէկ, երկրորդ կարգինը՝ քառասունական, երրորդ կարգինը՝ քսանական, իսկ չորրորդ կարգի աշակերտք՝ որոնք որբ են և չքաւոր ծնողաց որդիք, բոլորովին ազատ են այս տուրքից. որոց և դասագրքերի և այլ ուսումնական պիտոյից հոգացողութիւնն լցուցանում է Որբանեամ՝ ընկերութիւնն, որոյ վերայ պէտք է խօսինք ներքևը. նոցանից խիստ չքաւորների համար հանդերձ անելու պարտաւորութիւնն յանձն է առել Հոգաբարձութիւնն, ինչպէս որ արաւ այս տարի մէկի համար.

Թոշակառութեան այս կարգաւորութիւնը՝ բաւականին կարող է զօրացնել ուսումնարանի նիւթական միջոցը. վասն զի եթէ անպակաս հաւաքուին թոշակները, կարելի է տարին 400 մանէթից աւելի օգուտ ստանալ. մնացեալ անթոշակատու աշակերտաց համար ևս որոշուեցաւ, որ նոցանից ամեն մէկի համար երրորդ կարգի հաշուով տարեկան թոշակադրամներ խնդրուի քաղաքիս առաջաւոր անձինքներէն, համարել տալով նորանց որպէս որդեգիրներ ցանկացող ազգասիրաց Պարոններին. սակայն այս ուսումնարանաօգուտ որոշմունքը տակաւին իրագործուած չէ. վերոյիշեալ կարգադրութիւններից յետոյ հրաւիրելով բոլոր աշակերտները հոգաբարձութեան խորհրդարանը՝ բացատրեց նոցա այն պարտաւորութիւնները՝ որ ունին դէպ 'ի իւրեանց զաւակներն՝ ուսման և կրթութեան վերաբերութեամբ. և ըստ տրագրութեամբ պարտաւորեցոյց նորանց իւրաքանչիւրին՝ որ առանց նախապէս իմաց տալու հոգաբարձութեան ժողովին՝ իւրեանց որդիքը չը հանեն ուսումնարանից, նորանց կանոնաւոր կարգաւ ուսումնարան գալուն և դասերի պատրաստութեանցն ինքեանք ևս հոգատար լինին տնեղումն, և առանց ամենակարևոր պատճառների ուսումից յետ չ'ձգեն, և այսպէս ուսումնարանի յետադիմութեան՝ և իւրեանց զաւակաց ուման մասին ամենակարևոր և թանկագին ժամերն 'ի զուր կորչելուն պատճառ չ'լինին, ինչպէս որ եղել են ցայժմ՝ գլխաւորապէս այդ իսկ հանգամանքներով։ Այս կարգադրութիւնը թէպէտ ստորագրութեամբ բոլոր աշակերտատեարց՝ նոցանից հաճութիւն գտնելուց յետոյ՝ վաղուցուանից արմատացած վնասաբեր սովորութեան պատճառաւ դարձեալ խոչընդոտեամբ չ'կատարուեցաւ, սակայն փոքր 'ի շատէ ունեցաւ իւր ազդեցութիւնը ոմանց վերայ, և հետևաբար բոլորովին ապարդիւն չը մնաց. ուստի և այս իսկ կարգադրութեանց շնորհիւ ուսումնարանը սկսաւ յառաջադիմութեան ճանապարհի վերայ ընկնել. որից յուսալի է կարելին օգուտը քաղել, թէ որ Պատուելի Հոգա-

բարձրութեան անդամները միաբանական ջանքով աշխատին ազգասիրաբար յառաջ տանելու իւրեանց նշանաւոր գործը՝ հետզհետէ լրացուցանելով ուսումնարանի և այլ թերութիւնները*)։

Ուսումնարանիս աշակերտաց տարեկան հարցաքննութիւնն սկսուեցաւ անցեալ յունիս ամսոյ 17-ին, և աւարտուեցաւ նոյն ամսոյ վերջին. որոյ և սկսելուց երեք օր յառաջ՝ Պ. Տեսուչը գրաւոր յայտարարութեամբ իմացուցեալ տուեց Հոգաբարձութեանը, որ նոյն ամսոյ 16-ին պէտք է սկսուի հարցաքննութիւնը. և աշակերտներին պատուիրուեցաւ, որ յայտնեն իւրեանց ծնողացն՝ թէ հարցաքննութիւնը սկսուելու է, ցանկացողները նշանակեալ ժամերին կարող են ներկայ լինիլ նոցին շարունակ մինչև աւարտումը. սոյնպէս և բերանացի յայտնուած էր ուրիշ անձանց ևս հարցաքննութեան օրը, և հրաւիրուած էին ներկայ լինելու. սակայն որոշեալ օրը երբ ժամուութից պէտք է սկսուէր հարցաքննութիւնն, մինչև տասը բաց ի հոգաբարձութեան երեք անդամներից՝ ուրիշ հրաւիրեալներ չկային. ուստի որոշուեցաւ հետևեալ օրից սկսել, և ոմանց տարաձայն տրրտունջներն կարճելու՝ և այդպիսի անօգուտ խօսակցութեանց տեղիք չտալու համար՝ ստորագրութեամբ յիշեալ Հոգաբարձուաց մէկի՝ այն է բարեկրօն Տէր Յովսէփ Ա. Քահանայի Կոստանեանց՝ գրաւոր իմացուցաւ բաւական անձանց՝ հրաւիրելով նոցա նշանակեալ ժամանակամիջոցներին ներկայ լինել աշակերտաց հարցաքննութեանը. որպիսի հրաւիրաթղթին թէև բաւական անձինք ստորագրել էին իւրեանց լսելու մասին, թեպէտ ոմանք էլ անարուհաճ էին եղել ստորագրելու, սակայն եթէ ճշմարիտը խօսելու լինինք, դոցանից շատ սակաւը երբեմնապէս ներկայ էին լինում հարցաքննութեան. սոյնպէս և հոգաբարձութեան անդամներն ևս գուցէ անձնական կամ պաշտօնական գործոց արդելարիթ պատճառներով բոլորեքեանք ևս շարունակ ներկայ չկարողացան գտնուիլ. բայց միայն Տփխիսից վերադարձած մեր քաղաքացի մի քանի Գիմնազիական աշակերտներ, որոնք ամառնային արձակուրդի պատճառաւ գտնվում էին այս տեղ, որոնցից և երկուքը արդէն աւարտել էին իւրեանց Գիմնազիական ուսումը, զրեթէ շարունակ ներկայ էին մնացեալներ Ռուսաց լեզուի, և այդ լեզուաւ դասախօսուած առարկայից հարցաքննութեանց ժամանակ, և ինքեանք իսկ առաջարկում էին զանազան հարցմունքներ. որոնք և գոհ մնացին աշակերտաց բաւականացուցիչ պատասխանատուութեամբը. այս կարգաւ աւարտեցաւ հարցաքննութիւնը, և առաջնակարգ աշակերտներից երեքը աւարտած լինելով ուսումնարանի սահմանեալ ուսման շրջանը՝ դուրս եկան ուսումնարանից պատշաճաւոր վկայականներով և պարգևով. մնացեալներից արժանաւորները ըստ կարգին փոխադրուեցան բարձր դասատուններ. որոնցից աւելի յառաջադէմները՝ ոմանք պարգևատրուեցան գրքերով, և ոմանք գովասանական թերթերով։ Այդ պարգևներն բաժանելու օրը՝ թեպէտ զբաղրոցական հանդէս անելու դիտաւորութիւն կար,

(*) Հասարակական գործոց եւ ազգային ընթացից վերայ թէ բանաւոր եւ թէ գրաւոր հրապարակական խօսողներից ոմանք սովորութիւն ունին միմիայն գործերի եւ ընթացից տկար կողմերը բացատրել, որ ազգային վերքերը բացուին, եւ օր յառաջ նորա կարեւոր դարմաններ անելու հոգատարութիւններ լինին, որպէս զի հետզհետէ մահացու կերպարանք չստանան այդպիսի վերքերը. ի հարկէ այդ մեծ օգուտ կարող է բերել, թէ որ ստոյգ եւ արդարացի լինին խօսուածները, եւ գրուածները բոլորովին ազատ սնոտի բծախնդրութիւնից, մնասակար ու ատելի կրքերից, բայց որովհետեւ այդպիսի հասարակական գործերին վերահասութիւն անողների մեծ մասը մեր մէջ ծրիապէս պարտաւորուած են, ըստ իմ կարծեաց անօգուտ կլինէր. թէ որ նոցա բաւ կողմերի վերայ եւս տեղեկութիւն տրուի հրատարակութեանց միջոցաւ. իսկ թերութիւններն հետզհետէ բառնալու առթիւ հասարակութեան կողմից գործակատար անձանց վերայ եղած յոյսերն յայտնելով, եւ եթէ կարելին է, պատշաճաւոր խորհուրդներ տալով բարոյապէս պարտաւորացնել նոցա եւ խրախուսել, որ իւրեանց ստանձնեալ հասարակական գործերն արժանաւոր կերպով յառաջ տանեն, եւ այնպէս պատկելով հասարակաց ազգօգուտ ակնկալութիւնները, արդարացնեն այն բարի եւ մեծ համարմունքը, որ ունին նորա իւրեանց վերայ այդօրինակ գործակատարութեանց առթիւ։

սակայն յաջողութիւն չ'գտաւ. ուստի և ուսումնաւարտ աշակերտների մէկից այդ հանդիսի վերարերութեամբ պատրաստուած ճառն մնաց առանց ընթերցման. ահա այս է մեր Ազգային Հոգևոր Ուսումնարանի ներկայ տարւոյ ուսումնական մասի գրութեան նկարագիրը. իսկ նիւթականին կ'մնայ՝ երբ բարեջան Հոգաբարձութիւնը աշխատ կ'լինի պարզել բոլոր հաշիւները և տալ հրատարակութեան 'ի տեղեկութիւն ցանկացողաց, առայժմ այսքան միայն յայտնելով՝ թէ Հոգաբարձութեան աշխատութեամբ այս տարի բարձրագոյն հոգևոր Իշխանութեան հրամանաւ եկեղեցւոյ սեպհական մի քանի կրպակներ որոշուեցան՝ այսուհետև լինիլ սեփականութիւն ուսումնարանին. վասն զի այդ կրպակներն վերանորոգութեան կարօտ լինելով՝ ուսումնարանի եկամտովն եղաւ նոցա վերանորոգութիւնը՝ որ մօտ է աւարտուելու. որոյ համար թէ և 600 մանէթ ծախս եղաւ, սակայն ուսումնարանը ունեցաւ մի այնպիսի անշարժ կալուած, որ փոխանակ 210 կամ 15 մանէթ տարեկան օգտի, որ բերում էր ցարդ տեղւոյս աւագ եկեղեցւոյն Հայոց, այժմ մօտ 600 մանէթ բերելու յոյս կայ։

Հիմա խօսինք ընթերցարանի վերայ. այդ հասարակաօգուտ առարկայն ևս այս տարի ստացաւ վերակենդանութիւն շնորհիւ մի երկու բարեհոգ յառաջաւորաց. որոնք աշխատեցան նախ բարեկարգել ընթերցարանի արտաքին դրութիւնը, որպէս զի տեղւոյ մաքրութեամբ և համեստ զարդարանքով ընթերցասէր ազգայնոց քաղաքիս մի փոքր աւելի ախորժելի կացուցանեն ընթերցարանը, և գրաւեն նոցա սիրտը զէպ ի այդ շահաբեր առարկայն. ուստի այդ իսկ մտօք ընթերցարանի երկու սենեակներն՝ որ կից են տեղական ազգային Հոգևոր ուսումնարանին, նորա հարաւային կողմից՝ բաւական վայելուչ կերպարանք ստացան թէ յիշեալ Պարոնների և թէ նոցա միջնորդութեամբ ուրիշ զանազան բարեսէր անձանց ծախսերովն, այն է՝ ներսի սենեակի պատերին գեղանկար թղթեր (շպալներ) կպցնելու, դրա ներքին տախտակամածը (պոլ), դուռը, լուսամուտը պատշաճաւոր գոյներով ներկել տալու ծախսն՝ ընդամենն 20 մանէթ՝ հատուցել է աստիճանաւոր բարեծնունդ Պ. Գէորգ Շահ-Խաթունեանցն, սոյնպէս ընծայել է ընթերցարանին և տասնեմէկ կտոր զանազան գրեանք. ևս և թէ իւր տանից և թէ ուրիշ տեղից ժամանակաւորապէս բերել տուած է ընթերցարանապատկան մի քանի ամենակարևոր կարասիք՝ մինչև որ նոցա տեղը նորերը պատրաստուին նոյն իսկ ընթերցարանի եկամտովն. որովհետև դրա հին կարասիքներից խիստ սակաւ էին մնացել, և առաջմանէ ևս այդ կերպ հարկաւորեալ պատկանաւորութիւններից զուրկ էր։ Դրսի սենեակի ներքին տախտակամածն որոշելու ծախսն ընդամենն 18 մանէթ հատուցել է Պօղոսիկ Գերաղնի. Յովհաննէս Աղայն Տիգրանեանց. այդ տախտակամածը և այդ սենեակի դուռը և երկու լուսամուտներն ներկելու հարկաւոր նիւթերի գինն ընդամենն 6 մանէթ հատուցել է յարգելի Պ. Իսկանտար Խոյեցեանցն, Պատուամեծար Պ. Յովհաննէս Բարայեանցն ընթերցարանի ուրիշ կարևոր հարկաւորութեանց համար ծախս է արել իւր քսակից ընդամենն 11 մանէթ. Յարգոյ Պ. Յովհաննէս Տայեանցն ընծայել է ընթերցարանին մի հատ քաշ անելու լամբ, որոյ արժողութիւնն է 5 մանէթ. սոյնպէս Յարգելի եղբարքն Գեորգի և Լուկայ, որ Յոյն են ազգաւ, յիշեալ պարոնայց մէկի խնդրանքն ընծայել են մի հատ սեղանի վերայ դնելու լամբ, որոյ արժողութիւնն է 5 մանէթ. Յարգոյ Պ. Գրիգոր Տէր Յարութիւնեան ընծայել է մի լուսամուտի վարագուրացու (զանելես) եօթն արշին քիսեայ, որոյ արժողութիւնն է 3 մանէթ. Այս ամենը պատրաստուելոց յետոյ՝ դարձեալ նոյն Պարոնների աշխատութեամբ կազմեցաւ նորէն մի Ընթերցասիրական ընկերութիւն տարեկան երկրակն մանէթ բաժանորդագրամով, որոյ անդամոց թիւն այժմ հասել է 41ի, և յուսալի է թէ հետզհետէ աւելանայ. այս ընկերութիւնը անցեալ յունիս ամսոյ մէջ համագումար ժողով կազմելով ընթերցարանումն՝ որ բարեկարգ վարչութեան համար ընտրեց մի Վերատեսուչ, մի Գանձապետ մի Մատենապահ, և եօթն անձինքներից բաղկացեալ մի մանեաժողով, որոնց ամենքի պարտականութիւններն մի առ մի գրուած են ընկերական կանոնագրութեան մէջ առանձին առանձին յոգ-

ուածներով. որպիսի կանոնադրութիւնը՝ նոյնպէս և ընկերութեան բոլոր անդամց և պաշտօնավարաց անուններն հրատարակութեան ուղարկելու համար յօդուածիս ընդարձակութեան պատճառաւ թողնվում են մի ոչ յարմարաւոր միջոցի։

Այս Ընթերցարանը համաձայն իւր նախկին նպատակին պէտք է հաղորդէ ընթերցասէր ազգայնոց քաղաքիս և օտարականաց զանազան օգտաւէտ գրեանք, Լրագրներ և Օրագրներ Հայ և Ռուս լեզուաւ. որից պէտք է օգտուին տեղական ազգային Հոգևոր ուսումնարանի առաջնակարգ աշակերտները, նոյնպէս և Հայաստանի վկայեալ չքաւոր ընթերցասէրներն ձրիապէս։

Ընթերցարանիս արտաքին գրութիւնը վերոյգրեալ կերպիւ բարւոքուելուց զկնի՝ նորա ադքատիկ մատենադարանն ևս փոքր ի շատէ հարստացել է այժմ զանազան գրքերով Հայ և Ռուս լեզուաց. վասն զի մեր քաղաքացի բարեջան Տէր Յովսէփ Աւագ Քահանայն Կոստանեանց՝ այս տարի Տփղիս եղած միջոցին՝ դորա մասին ևս ուշադրութիւն դարձնելով՝ Մեղու Հայաստանի պատուական լրագրի Դ-րդ համարի միջոցաւ հրատարակել տուել է մի յօդուած, որով և ծանուցանելով յիշեալ մատենադարանի ադքատութիւնը՝ խնդրել էր բարեսէր ազգայիններից ձեռնտուութիւն. որպիսի հրատարակութեան ադդեցութեամբ, ևս և իւր որդւոյ Պ. Կարապետի Կոստանեանց և նորա ընկերակից մերաքաղաքացի ազնուասիրտ Հայազն պատանեկաց, որ աշակերտ են տեղական Գիմնազիայներին, գովելի աշխատութեամբ հաւաքել էր զանազան բարեգործ անձինքներից բաւական գրեանք. որոց մի մասը բերելով իւր հետ՝ յանձնեց մատենադարանին, և մնացեալ մի մասն էլ պատրաստի չ'լինելու համար թողել էր այն տեղ, որը և յիշատակեալ որդին բերելով իւր հետ՝ յանձնեց նոյնպէս ըստ պատկանելութեան. սոյնպէս և վերոյիշեալ յօդուածի ադդեցութիւնամբ Ադդասէր Պ. Մկրտիչ Միանսարեանցն բարեհաճել էր Պետերբուրգից փոստայով ուղարկել ընծայ մեր ընթերցարանին քսան հատոր զանազան գրեանք. որոց բոլորեցունց ցուցակը ուղարկելով սորա հետ, յատկապէս խնդրում եմ . . . . Խմբագրութիւնէդ,

որ բարեհաճիք յօդուածիս հետ հրատարակել. որպէս զի ընծայատուցց ադդայինք իմանան և միամտութիւն ընելով որ իւրեանց նուէրներն անկորուստ հասել են իւրեանց տեղը, և ուրիշներն ևս բարի օրինակ առնեն սորանից. ևսև թէ սոյնպիսի նուիրադործութեամբ մեր ընթերցարանին նպաստելու ուրիշ ցանկացողներ էլ գրտնուին՝ գործադրեն իւրեանց ազնիւ ցանկութիւնը, անտարակոյս լինելով՝ որ իւրեանց նուէրները տեղ հասնելուն պէս անկորուստ կ'պահպանուին, և սպասելի օգուտներ կ'քաղուին նոցանից, որն որ առաջին և գլխաւոր վարձատրութիւն է համարվում այդպիսի առաքինասէր անձանց։ Ուրեմն ընթերցարանի բոլոր ընկերութեան կողմանէ յայտնելով հրատարակական խորին շնորհակալութիւն այն ամենայն բարեսէր անձանց, որոնք թէ աշխատութեամբ և թէ դրամական նուիրաբերութեամբ, թէ զանազան գրքեր ընծայելով տուին մեր ընթերցարանին վերակենդանութիւն և բարեզարդութիւն, որին և ցանկալով յարատև կեանք և յառաջադիմութիւն, սկսենք խօսել մեր Որբախնամ ընկերութեան երկրորդ տարւոյ գործունէութեան վերաբերութեամբ։

Այս Ընկերութիւնը՝ ինչպէս որ անցեալ տարի սորա վերայով գրուած յօդուածից յայտնի է, ունի իւր նպատակ զլխաւորապէս տեղական Ադդային Հոգևոր ուսումնարանի որբ և չքաւոր աշակերտաց դասագրքեր տալու և ուսման այլ պիտոյքը հոգալու, և հետզհետէ զումարելու այնքան դրամ, որ նորա տոկոսովն ոչ միայն այդ պիտոյքը մշտնջենաւորապէս հոգացուին, այլ և ուրիշ ամենակարևոր պիտոյք ևս ուսման և կրթութեան նկատմամբ։ Ընկերութեանս մասին ընդարձակ տեղեկութիւն ցանկացողը կարող է կարդալ վերոյիշեալ յօդուածը, իսկ սորանով կամիմ յայտնել թէ՝ այս տարի ընկերութիւնը ունէր 92 անդամ թէ հին և թէ նոր գրուածներից. որոնցից մի քանիսը չ'նայելով թէ շաբաթական երեք կոպէկ փոքրաքանակ տուրք միայն ունին վճարելու ընկերութեան դանձարանին, անդամ գրուելուց յետոյ՝ այլ ևս չեն կամեցեր շարունակել և ոչ մի շաբաթական հատուցանելով. ոմանք էլ մի քանի շաբաթական

տալուց յետոյ՝ յետ են կանգնել. իսկ մեծ մասը՝ որք արդարև արժանի են շնորհակալութեան, յարգելով իւրեանց խոստմունքը, և ճանաչելով զործի թէ ներկայ և թէ ապագայ արդիւնաբեր նշանակութիւնը և ազգօգուտ նպատակը, անպակաս վճարել են իւրեանց տուրքը։

Ներկայ յուլիս ամսոյ 1-ին ընկերութեան 4-րդ տարեշրջանը լրացած լինելով, որը և հաստարակ օր պատահելով՝ ընկերական հաշուատեսութիւնը թողնուեցաւ այդ եօթնեկի կիւրակէ աւուրն, այն է ամսոյ 5-ին, որպէս զի անդամներն զործից ազատ լինելով կարողանան ընդհանրապէս ներկայ լինել հաշուին. ուստի և զորա մասին ընկերութեան կառավարիչ Մատնաժողովոյ կողմից հրաւիրագրով թէև բոլոր անդամց առաջուց իմաց տրուած էր, սակայն զժբաղդաբար այդ օրը անդամների մեծ մասը ներկայ չկարողացան լինել, միայն մի քանի անձինք՝ որոնք հարևանցի կերպով հաշիւն նկատելուց յետոյ՝ որոշեցին թողնել հետևեալ կիւրակէ աւուր, ուստի և միւս եօթնեկի մէջ կրկին հրաւէր պրուեցաւ, և նշանակեալ օրը՝ որ էր 12-ն ամսոյս՝ ներկայ եղող անդամներով հաշիւն նկատուեցաւ. որից երևեցաւ որ առաջի տարուանից բոլոր ընկերական ծախսերն զուրս գալուց յետոյ՝ մնացել էր . . . . . 103 — 27½

Այս տարի շաբաթականներից դոյացել է ընդամենն . . . . . 93—21

Մատենապահի ձեռամբ վաճառուած գրքերից ստացուել է օգուտ . . 10—35

Յարգոյ Պ. Բաղդասար Աբովեանցն յանուն ընկերութեան ընծայել է չորս հատ Պատմութիւն Հայոց, որոց արժէքն է. 4 — ,,

Այս երկրորդ տարուց ընթացքում տոկոսով տրուած գումարից ստացուել է շահ . . . . . 8 — 40

գումարն է . . 221—9½

Այս բոլոր եկամտի գումարից ծախս է եղել որը և չբաւոր աշակերտաց դասագրքեր տալու և ուսումնական կարևոր պիտոյքը հոգալու, լրագրի և ընկերական այլ մանր մունր հարկաւորութեանց համար ընդամենն 22 մանէթ 68 կոպէկ։ Այս բոլոր ծախսը զուրս գալով վերոգրեալ եկամտի գումարից՝ առ մէկն յուլիսի ներկայ ամի կ'մնայ ընկերութեանն ընդամենն 198 մանէթ 41 կոպէկ ու կէս. որոյ 131 մանէթը տրուեցաւ տոկոսով, մնացեալն էլ վաճառելի գրեանք են և ապառիկներ աշակերտաց վերայ, որ պէտք է մատենապահի ձեռամբ՝ ինչպէս գրքերն ծախուին, նոյնպէս և ապառիկներն հետզհետէ հաւաքուին և յանձնուին գանձապետին՝ տոկոսով տալու կամ ընկերութեան նպատակին վերաբերեալ հարկադրութիւններն հոգալու համար։ Հաշիւն վերջանալուց յետոյ ներկայ եղողները ամենայն ուրախութեամբ երրորդ տարին շարունակելու համար ստորագրեցին իւրեանց անունները պատշաճաւոր մատեանի մէջ. որոնցից մի երկուսը ամբողջ տարեկան, ոմանք կէս տարեկան և ոմանք մի քանի շաբաթական հատուցանելուց և հաշուետոմարը իւրեանց ստորագրութեամբ վաւերացուցանելուց յետոյ՝ մեկնեցան. իսկ բացակայ մնացած անդամներին առաջին տարուց պէս չորս անձանց աշխատութեամբ կրպակէ կրպակ երթալով ներկայացուցուած հաշուետումարը այն մատեանի հետ, որոյ մէջ պէտք է ստորագրէին իւրեանց անուններն, կրկին շարունակելու համար, որոնցից մեծ մասը ուրախութեամբ յօժարութիւն տուին. և անդամ գրուելուց յետոյ՝ ոմանք ամբողջ տարեկան, և ոմանք մի քանի շաբաթական կանխիկ հատուցին. իսկ որոնք որ չկամեցան շարունակել, ուրիշները փոխանակեցին նորանց տեղը. այժմ անդամց թիւն է 95. և յուսալի է թէ հետզհետէ աւելանայ ջանացողութեամբ եռանդուն անդամակցաց ընկերութեան. որոյ յարատևութեան և արդիւնաբեր յառաջադիմութեանն մնամ մշտապէս ցանկացող

Մկրտիչ Վ. Ուրֆ. Էրզրումցի։

է 15-ն յուլիսի 1870 ամի

Յանդիսանդրապոլ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։